

ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ  
ԼԱ ՎԸՐՆԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՍԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Ուրախ ենք յայտնելու, թէ Լա Վըրնի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ նոր Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Նարեկ Աւագ Քինյ. Մատարեան լծուած է իր հոգեւոր առաքելութեան եւ Ծուխը աւելի կը կազմակերպուի եւ նոր ծրագիրներ կը մշակուին:

Ուրբաթ, Փետրուար 25ի երեկոյեան Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց Լա Վըրնի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ կատարուած Հսկան Արարողութեան, որուն մասնակցեցան Ծուխին Հոգեւոր Հովիւը, Սարկաւագներ եւ Դպրաց Դասը: Սրբազան Հայրը տուաւ իր ոգեւորիչ պատգամը: Կոչ ուղղեց Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան եւ հաւատացեալներուն, որ սերտօրէն համագործակցին Տէր Հօր հետ եւ համատեղ ջանքերով զօրացնեն եկեղեցին:

Արարողութեան աւարտին տեղի ունեցաւ Մեծ Պահոց ընդունելութիւն: Ապա Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ նորընտիր Ծխական Խորհուրդին հետ եւ տուաւ անհրաժեշտ ուղղութիւնները: Այս առիթով Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Սարկաւագաց Վարչական Մարմնին հետ: Սրբազան Հայրը հարկ եղած ցուցմունքները տուաւ անոնց եւ քաջալերեց, որ նոր եռանդով շարունակեն իրենց առաքելութիւնը: